

ԲԱԺԱՆՈՐՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »

Երեսնամսեայ համար
Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »

Ամերիկայի համար
Տարեկան 2:0 Ժ.Ր.
Վեցամսեայ 1.25 »

ՎԱՆԻԿԻ ԿՂՈՒՆԵԼԻ

Պատկերակ սոյո ստաթիկ
երևիկն համար 40 սանթիմ
Կ. իսկ վերջին երեսի հա-
մար 20 սանթիմ Կ. Երեքին
սանթի մեզանկերու համար
20 Օլո գեղը կողայ:

ՇԱՐՇՈՒՄ

Նախկին և նորապիսի
Խմբագրութեան հասցիկն

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

Վրոթիւնի և չին տրեթիւր

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԵՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՆԵՐԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Կազմակերպիչ և Մանուկի առթիւ մեզ
զրկուած շնորհաւորական քարոզերուն
համար. խմբագրութիւնս իր շնոր-
հակալութիւնը կը յայտնէ:

«ՇԱՐՇՈՒՄ» 1900Ի ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Փետրուար 1ին կսկսի «Շար-
ժում»-ի երրորդ տարեշրջանը հե-
տեւեալ պայմաններով.

Պուշկարիոյ համար տարեկան 12 Ֆր.
» » վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
» » վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար տարեկան 3 Ժ.Ր.
» » վեցամսեայ 1.50 »
Պուշկարիոյ համար մեկ 15 սանթիմ
Արտասահմանի » » 20 »

Բաժնեգրիները կանխիկ են:
Ամէն բաժանորդ իր հասցէին
հետ մէկտեղ պէտք է բաժնե-
գիրը զրկէ, ապա թէ ոչ «Շար-
ժում» չի զրկուիր:

Մեր գործակալներէն կը խնդ-
րուի հազորդել մեզ չը վճարող
բաժանորդներուն անունները,
որպէս զի այդ մարդոց թերթերը
դադարեցնենք:

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐՆԵՐՈՒՆ

«Շարժում»-ի երկրորդ տարե-
շրջանը աւարտուելուն մէկ ամիս
մնաց. մեր այն ամէն բաժանորդ-
ները որոնք մինչեւ հիմա չեն
վճարած, թող բարեհաճին զըր-
կել իրենց բաժնեգրիները:

Փետրուարի 1ին պիտի սկսի
երրորդ տարեշրջանը. նախորդ
տարուան պարտքերը չը վճարո-
ղին «Շարժում» չը պիտի զրկուի:
Փետրուարին պիտի յայտարար-
ուին նաեւ բոլոր այն բաժա-
նորդներու և գործակալներու
անունները, որոնք խիղճը ունին
հայ թերթի մը վարձքը ուտելու:

Ն. Ա. Մ. Ա. Կ. Ա. Տ. Ո. Փ

Ամերիկայի գործակալներէն կը
խնդրենք որ յատուկ մեզ հաս-
ցունեն գրամները, հաշիւները
և բաժանորդներու ցանկը, նշա-
նակելով նաեւ թէ որ ամէն են
սկսած «Շարժում» ստանալ:

ՔԱՆՆԵՐՈՐԴ ԴԱՐՈՒՆ ՅԵՄԻՆ ՎՐԱՅ ()

Ներկայ սերունդը առաւելու թիւ-
նը կունենայ դարաւերջի մը բար-
ձունքէն մարդկային պատժութիւնը
զիտել: Նայուածքը բնականաբար
կուզուի վերջացող դարուն վրայ,
անոր աշխատանքին արժէքը գնա-
հատելու: Տասնըութերորդ դարը ի-
մասաւորական դար կոչուեցաւ,
ցուցնելու համար թէ ան նախկին
ո եւ է մէկ դարէ աւելի բրած է լու-
սաւորութեան համար ու անսխալ-
փէտիսթներն յետոյ՝ Գաւթի մէջ ի-
մասաւորութեան և նախաւոր ծաղ-
կումը հասունացուցած է: Այս անունը
ճիշդ է, որովհետեւ իմա տասնութա-
նին քով տասնըութերորդ դարու
միւս բոլոր աշխատանքները եւ կը
մնան: Այսպէս այ տասնըութերորդը
գրեւորու գար կոչուեցաւ, ցուցնելու
համար թէ՛ ո՛չ մէկ դար այնչափ նոր
գրեւոր բրած է որչափ տասնըիննե-
րորդը: Իրողութիւնը ճիշդ է, բայց
անունը անբաւական, որովհետեւ
տասնըիններորդ դարը ինչպէս գրե-
ւորու այնչափ եւ լարի ճիւղերու
մէջ ալ մեծ, աշխարհ յեղաշրջող յա-
ռաջիմութիւններ բրած է: Պատկ
յետագործակալները մը նկատենք:

Երբ տասնըիններորդ դարը ծնու-
եց, ֆրանսական յեղափոխութիւնը զըս-
պուած էր արդէն Գորսիքացի Պաւս-
փարթիւն կողմէ, որ կը պատրաստէր
անոր աւերակներուն վրայ իր աշ-
խարհի տիրապետութիւնը կանգնելու:
Յեղափոխութիւնը հետեւանքն էր
ֆրանսայի մէջ մտքերու յեղաշրջումի
մը. լուսաւորութեան երրորդ գասա-
կարգը կը պահանջէր իր կրած պե-
տական բռնին համապատասխան մաս-
նակցութիւն մը կառավարութեան
մէջ: Պաւսփարթիւնը չի հասկցան նոր
ժամանակը եւ արիւնի ծովու մը մէջ
իրենց բացարձակ իշխանական փառ-
քովը կորսուեցան: Նախօրէն յեղա-
փոխութիւնը կը զսպէր բայց իր յաղ-
թապանք բանակին հետ անոր գաղա-
փարները կը սանկը սամբոլը եւ իր-
պայի մէջէն ու ամէն սեղ միջին-
դարեան աւատական պետութիւնը կը
փլէր: Գերմանիայի մէջ քաղաքական

() Ֆրանսիական Գորսիքացի իր
1899 Գեղարքերը Յի թիւին մէջ
հրատարակած է սոյն խմբագրականը,
զոր շահեկանութեան զուրկ չենք հա-
մարեր թարգմանաբար ներկայանել
Շարժումի ընթացողներուն իբրեւ
դարաւերջի սետութիւնը գերմանա-
կան ամենաանպատար թերթերէն մե-
կուն:

կազմութիւնը այնչափ ողորմելի ե-
ղած էր, որ սղզին մեծ մտքերը կը
յուսահատէին միակ ու զօրաւոր Գեր-
մանիայի մը վերահաստատուէն ու
համակերպած՝ Արուեստի հողը կա-
պատանէին: Բայց ճիշդ արուեստի
այն բարձր ծաղիկումը, զոր անոնք
կը ստեղծէին, օգնեց Գերմանիայի
վերածնունդը պատրաստելու, որով-
հետեւ ան կը հաստատէր Գերմանիա
մը իմացականապէս զօրաւոր. այս ի-
մացական զօրութիւնը պիտի փոխուէր
վերջապէս քաղաքական զօրութեան,
ինչպէս՝ կողմնը պատուի: Ազատու-
թեան կողմնակից, որոնցով նախօ-
րէնի համաշխարհային տիրապետու-
թիւնը կործանեցաւ, ճիշդ է որ հայ-
րենասէրներու յոյսերը չի բարձրեց-
նին: Վիէնայի վեհաժողովին գրիչ-
ները եղծեցին ինչ որ կըրմանական
սուրբ վասակած էր: Բայց գործը յե-
տաձգուած էր միայն, ո՛չ շնչուած:
Վարժապետի աշխարհակալին զէմ մը
ուսած կողմները ամբողջ Եւրոպայի
մէջ ազդային կեանքը կենդանացու-
ցած էին եւ նոյնիսկ Մէլիթիւրիսա-
կան հակազդեցութեան զօրաւոր ճըն-
շումը չէր կրնար արդիւնք որ ամբողջ
ազատական Եւրոպան Յոյներուն,
Բոսնիացիներուն, Հուսկարացիներ-
ուն ու կողմնակից ամենաանպատար
մասնակցութիւն մը ունենայ: 1878
թուականն ալ չի բերուաւ ո եւ է իրա-
գործում, բայց ան ձգեց հիմը, ու-
րուն վրայ ապառայ սերունդ մը աղ-
զային չէնք կրնար հաստատել: Եւ
Իտալիայի միութիւնը կատարուե-
ցաւ, անոր հետեւեցաւ Գերմանիան,
որուն միութիւնը ֆրանսական պա-
տերազմի գաշտերուն վրայ կը թուե-
ցաւ: Եւրոպայի սիրտը Գերմանական
զօրաւոր պետութեան մը հաստատու-
թիւնը, կը նկատուէր իբրեւ զօրա-
ւոր նպատակ մը աշխարհի խաղաղու-
թեան, որ մտաւորապէս քառորդ
գարէ մը ի վեր Աւստրո-Հունգարիայի
ու Իտալիայի զաշնակցութեամբը
Գերմանիայի կողմէն կը պահպանուի:
Այս ժամանակամիջոցին մէջ ընդհա-
նուր պատերազմ չենք ունեցած եւ
ուր որ հրգե՞ մը ծագէ՞ր կը սահմա-
նափակուէր սեղիւն վրայ, մինչեւ
անգամ թրջական արեւելքի այնչափ
վտանգալից երկրին մէջ, ժամանա-
կակից գերմանացի ամենեւին աշ-
խարհակալ չէ. երբ ան աշխատելու
ապրիլ կարողանայ կը ձգէ սիրով որ
ուրիշներ ալ աշխատին ու սպրին,
եւս րդարութիւնը անոր համար պա-
րազ ֆրազ մը չէ: Խաղաղութիւնը
պահպանելու այս բացարձակ կամ-
քին սողեւ՝ շատ մը վախեր ու ան-
վստահութիւններ, որոնք ի սկզբան
Գերմանական պետութեան հաստա-

տութեան նկատմամբ կը սածուէին,
հետզհետէ փայտացան եւ աւելի
պզտիկ ու աւելի սկար պետութիւն-
ներն են որ վստահ Գերմանիայի կը
յատեն իրենց աչքերը ու անկէ ի-
րենց անկախութեան պահպանումը
կը յուսան: Ուրվհետեւ պզտիկնե-
րուն յարմար չէ աշխարհաճաւաղումը,
մեծ կառավարութիւններու քաղա-
քական ու անասական զօրութիւնը
երթալով կաճի եւ արդէն պետական
մարդերը կը սենեն որ աշխարհի
պատմութեան հորիզոնին վրայ նուազ
մեծ պետութիւններ կը նշմարուին,
որոնք իրենց մէջ երկիրը պիտի բաժ-
նեն ու պատմութեան ընթացքը պի-
տի որոշեն:

Եթէ պզտիկները չեն ուզեր կլուել
ու ձուլուիլ, պէտք է ժամանակին
մեծ պետութեան մը հետ միասնալու
այն սեսակ ձեւ մը փնտռեն, որ ի-
րենց ազդային կեանքը պահպանէ:
Արդեօք այս կաղմութիւնը առանց
արիւնահեղութեան պիտի իրականա-
նայ: Կրնայ յուսացուիլ, Հակառակ
վերջին սարկներու յաճախակի պա-
տերազմներուն խաղաղութեան զա-
ղափարը մեծ յառաջիմութիւնները
բրած է: Այս պատերազմները, այսպէս
ըսելով, մասնաւոր զէպքեր են: Մեծ
պետութիւններու միջեւ պատերազմ
մը գրեթէ անբեւեակայից է. որով-
հետեւ սպասուելիք չահին զէմ կո-
րուսները շատ մեծ են: Եւ նոյնիսկ
հիմա երբ Անգլիացիները փորձառու-
թիւնը ունեցան թէ ի՞նչ է լուրջ
պատերազմ մը, ապապայի մէջ այն-
չափ չըջանայեց պիտի ըլլան պա-
տերազմի ջանքերն զպաշտպալու, որ-
քան միւս մեծ պետութիւնները:
Չարին հրաւերով գումարուած Խա-
ղաղութեան Համաժողովը պիտի կա-
րենայ ուրեմն իր բարեբար ազդե-
ցութիւնը կատարելապէս գործել:
Եթէ ի վերջոյ միայն երեք կամ չորս
մեծ պետութիւններ պիտի զոյանան,
որոնցմէ իւրաքանչիւրը ինքզինքին
կարենայ բաւել, որովհետեւ այն ժամա-
նակ քաղաքական ու անասական
ընդհարում երու մակերեւոյթները
զգալի կերպով պիտի պակսին եւ խա-
ղաղութեան պզտիկ խանգարիչնե-
րուն պարզապէս կարելի պիտի ըլլայ
պատերազմը արդիւնք, ինչպէս որ
մինչեւ հիմա ալ մերթ պատահած է:
Մեծ պետութիւններու հիմնադրու-
թիւնն ու աւարտումը յառաջիկայ
դարուն գլխաւոր գործը պիտի ըլ-
լայ: Մենք կը բաղձանք եւ կը յու-
սանք որ Գերմանիան, որ ձեռք յե-
րած արդար միութիւնովն ու անսե-
սական հոյակապ բարգաւաճումովը
զօրացած կը մտնայ նոր դարը, այդ
սիեզերական պետութիւններէն մէկը
ըլլայ: Բայց նաեւ կը բաղձանք ու

կը յուսանք որ Գերմանիան իր յարածուն ուժը միշտ միայն արգարու- թեան ոգիով ամբողջ մարդկութեան բարեխառնութեանը գործածէ . այնպէս որ միջին դարու բանաստեղծին խօսքը իրականանայ . «Գերմանական ոգիով անգամ մըն ալ աշխարհը կը բուժու- ուի» :

Տասնըններորդ դարը իմաստա- սիրական անուանին չէ արժանացած . այլ գիտականին : Իսկապէս իմաստա- սիրութեան մէջ Գանձին շատ հետու չենք գնացած . մինչեւ անգամ մեր մասնուէրը չէ կրցած զայն ամբողջու- վին իւրացնել : Միայն մէկ բանի մէջ իր ճշմարիտ աշակերտները կը գտնենք . գիտութեան մէջ : Գանձ հին բնագիտականութեան ու բարոյա- խօսութեան կրօնական վարկածները քանդելու միտելոյն ժամանակ ի- մասատարութեանը ու բարոյախօսու- թիւնը մարդուն ու քննութեան վրայ հաստատելու : Ասով միայն կարելի ե- դած է՝ ճշմարիտ գիտութիւն մը , ուրովհետեւ Գանձի հետ կը սկսի մա- թուր պատճառաւորութեան գաղափար- ին տիրապետումը ու հրաքը մէկզկի կը թողուի : Հիմա է որ մարդ ինք- զինքին , իր գիրքին ու իր ուժին կը գիտակցի , իր մեծ պարտականու- թիւնները կը ճանչնայ ու անոնց գործադրութիւնը ձեռք կ'առնէ : Տասնըններորդ դարուն մէջ գիտու- թեան ու արուեստի աշխարհակալու- թիւնները անվերջ կերպով մեծ են : Շոգեմաներ , հեռագիր , հեռախօս , ելեքտրականութիւն իրրեւ աղբիւր լոյսի ու ուժի , լուսապատկերային Վերլուծում , ուժի փոխադրութիւն , եթէրի գիւտ , Ռէօնթիկէնի ճառա- գայթեմեր , բնալուծութեան ու մե- լանագիտութեան ապշեցուցիչ յա- նազգիսութիւններ , սինթէսիսօկրաֆի , անթիլ հեռագիր եւ ինչպէս կարելի է բոլոր գիւտերն ալ յիշել — այնչափ շատ են մէկ դարու մը համար որ կը բաւեն շատ մը դարերու : Չարմա- նայի չէ որ գիտութեան այս վիթ- խարի զարգացումը , որ արեւելքը կը պղծիկցնէ , ժամանակը կը կարծցնէ ու ժողովուրդները իրարու հետ սերտ յարաբերութեան մէջ կը մտցնէ , ոչ միայն միջնադարին վաճառականու- թեան այլ եւ ընդհանուր քաղաքա- կանութեան տեւական օգուտ մը սայ , այնպէս որ ընդհանուր մրցումին մէջ

ոչ մէկ ժողովուրդ կարենայ ետ մ'ալ , եթէ չուզեր ընդ միշտ մտոցուելու վտանգին ենթարկուի ու ազգեցիկ քաղաքակիրթ պետութիւններու շար- քէն դուրս ձգուի : Այսպէս տասնը- իններորդ դարու գիտութիւնը յա- ուսջովմութեան օրէնքը հրաշալի կերպով բեղմնաւորեց : Մինչեւ հիմա գիտութիւնը մէկ բան միայն չէ կա- տարած . այն չէ կրցած պատասխանել այն ամէն հարցումներուն զոր մարդ- կային միտքը կընէ : Այս պատճառով շատ մը շրջաններու , մասնաւորապէս Յարմալի մէջ մեղադրուեցաւ ան ու հոն ալ «գիտութեան սնանկութեան» վրայ վերադարձի խօսուեցաւ : Սակայն ոչ թէ գիտութիւնը սնանկացած է . այլ սնանկացած են անոնք , որոնք կամ շատ բան կը պահանջեն գիտու- թեանէն եւ կամ ընդհանրապէս գի- տութիւնը կարհամարհեն , որովհե- տեւ անոնք զայն հակադրու ընդու- նակ չեն : Եթէ Յարմալի «մտքի բարձրութիւնները» , ինչպէս Պրիւն- իլիէն , Փօրէ , Պարէս , Վօկէ եւ ու- ռիշները արժեքալից կերպով հոռմա- կան եկեղեցիներ գիլ կը պարձան , այս գիտութեան սնանկութիւնը չէ . այլ մէկը բազմաթիւ նշաններէն Յարմա- սայի անկումին որ տասնըններորդ դարու վերջը գիտութեան ալայնչափ սեղ կրնայ ալ սրչափ արդարու- թեան : Ինքնահասկանալի է որ մար- դին , որոնք գիտական մասնուէր վրայ ամենեւին հակացողութիւն չունին եւ որոնք մտաւոր լուրջ աշ- խատութեան ընդունակ չեն , գիտին Պապին որ ինքզինքը անսխալական հաշակած ըլլալով , աւելի մեծ անհո- գութիւն մը կընծայէ իրենց . ա- նոնք հոն Վօկանի ու Պետրուի հետ յարմար ընկերութեան մէջ են : Ամէն պարագայի մէջ պէտք չէ ուրախ որ տասնըններորդ դարու վերջը կրօ- կան սցիլի վերադարձութեամբ նշանա- տը կը հանդիսանայ . բայց այս շար- ժումը ոչ զկարի Հոսմ եւ ոչ ալ զկարի արտաքին բացարձակ իշխանութիւն մը , այլ աւելի հետեւ կողմերի . ան կ'ապուած է իմաստասիրական շար- ժումին հետ , որ Հէկլըի , Շօրէն- հանէրի ու Գոնտիկ նիւթապաշտու- թեան շեղումէ մերտքը որովհետեւ Գանձի կը դառնայ . անոր վրայ ու առաջին անգամ անով կարելի եղած գիտու- թեան վրայ ապագայի մտաւորական

կեանքը հիմնելու : Արդ վիճ մը կը բացուի ամբողջ ժողովուրդին միջեւ , որու փոքրամասնութիւնը արդի գի- տութեան ամբողջ լոյսին մէջ կ'ազդի ու բոլոր մտաւորական հասոյքները կրնայ ինքզինքին հայթայթել , մինչդեռ մեծամասնութիւնը խոյ ու բթացած կ'ազդի այն գաղափարնե- րով , որոնք բազմաթիւ դայեր առաջ սեփականեց մարդկութիւնը : Վիճը այնչափ մեծցած է , որ ժողովուրդին երկու մասերը ալ հազիւ իրար կը հասկնան : Ամենէն ազնիւներն ու ա- մենէն բարիները անոնք են , որ այս վիճին վրայ կ'աւելն ու մը ձգել կու- զեն . անոնք մտքի բարիքները ամ- րող ժողովուրդին կուզեն մտաչելի ընել եւ եթէ անոնք կրօնական ոգին վերահսկող կը ջանան , պարճ մը չեն մտածեր սակայն զկարի ու եւ է բացարձակ իշխանութիւն մը , զկարի մեծամտ տառակուն հաւատքը կամ զէպի երկար առեւնէ ի վեր անցած ժամանակներու կրօնական արտաքին պաշտամունքները , այլ անոնք կը գործեն նազարէթի իմաստունին խօս- քին համեմատ , որ ասած է ժամանա- կին . «Պիտի գայ ժամանակ մը , երբ մարդ ո'չ լեռան վրայ եւ ո'չ ալ սա- ճարին մէջ , այլ մտքի ու ճշմարտու- թեան մէջ Աստուած զէպի պաշտէ» : Այս խօսքը , որ կը պահանջէ թէ կրօնքը միտքն ու ճշմարտութիւնը ըլլան , հիմա մտաւորապէս երկու հազար տարուան հետեւին ունի . ճիշդ ժամանակն է որ վերջապէս ի- րականանայ աս : Եթէ կրօնքը միտք ու ճշմարտութիւն է , գիտութիւնը ամենէն քիչ բանը ունի անոր զէմ առարկելու : Հաւատքը գիտութեան հետ կրնայ հաշտուիլ , եթէ ան յա- սակնութիւնը չունենայ , գիտու- թեան զէմ ու քանակականութեան նկատմամբ բացարձակ հակասու- թեանը մէջ յամառելու : Մենք մար- դերս , ոչ մէկ շահ ունինք բայց եթէ մեր բանականութիւնը եւ ոչ մէկ ճշմարտութեան միջոց բայց եթէ գի- տական քննութիւնը : Ով որ ա- ստիցմէ մէկը արհամարհէ անպատիժ չի մնար : Եթէ ուր կը հասնին այն ժողովուրդները , որոնք իրենց ան- հատական մտածումն կը հրաժարին ու կուրօրէն բացարձակ իշխանու- թեան մը առաջնորդութեան կը յանձնեն ինքզինքնին , այլ կը ցու-

ցընէ մեզի ստակալի յատկութեամբ մը ամբողջ լատին աշխարհին ճակա- տագիրը , որքան ասեն որ ան Հոսմի ու անոր օսկաններուն սկանջ կը կարէ : Տասնըններորդ դարը հա- լաւաբի ու գիտութեան համաձայնու- թիւնը չի կրցաւ բերել . այլ աւելի սրեց հակասութիւնը , քանի որ ժո- ղովուրդային խառնուրդն չի բերաւ այն լոյսը որ վիթխարի յոռաջողութու- թիւններու զէմ կեանքի ամէն ճիւ- ղերու մէջ անհրաժեշտ էր : Բաւական- նաչափ բարիլուութեան սկզբնաւոր- րութիւնները կ'աւելն ու թիւրիսա եւ կող դարը պիտի կատարէ գործ մը , զոր պետութիւն ու բնկերութիւն տասնըններորդ դարու մէջ զանց ր- բած էին , որովհետեւ անոնք որ լիջ գործերով քաղաքական , սնանկա- կան ու արուեստական խնդիրներով զբաղել ստիպուած էին , բայց եր- ջանկութիւն մըն է որ այն պարագայ , զի պետութիւն ու բնկերութիւն ժողովրդի կրթութեան նկատմամբ ձգած էին , մասուլը զայն յեցուց : Ան կաշխատի միշտ ժողովրդի լուսա- տարութեան եւ եթէ ոչ ուրիշ գորու- թիւն մը , զէմ ան պիտի արդիւն յե- տագիտութեան ուժերը , որոնք ա- մէն տեղ գործի վրայ են , իրենց նպատակին հասնելու :

Արդար իրաւունքով տասնըններ- րորդ դարու կը պատկանի «բնկերա- կան քաղաքականութեան դար»ի ա- նունը : Տասնըններորդ դարը տե- սաւ երրորդ դասակարգին զօրու- թիւն մը կազմելը , տասնըններորդ- ղին մէջ չորրորդ դասակարգը երե- ւան ելաւ եւ իր պահանջներուն մէկ շարքը գործադրել տուաւ . ու ար- զէն հինգերորդ դասակարգը զլուսի կը բարձրացնէ , անգործ բանուորնե- րուն կատակարգը ու իր փափաքնե- րուն դասակարգը կը պահանջէ , Գոր- ժաւորներու ապահովութիւնը , զոր առաջին անգամ Գերմանիա նշանա- կելի սահմանի մը մէջ ի գոյիս հա- նեց , վերջին դարուն ամենամեծ գործերէն մէկն է . արդարեւ ոչ միայն այն բարիքին համար , որ գործաւոր- ներուն բրած է այլ նաեւ այն պատա- կանալիներու արական պետութիւնը ի- կերական արդարութեան ըմբռնումով սնանկական ապահովութեան ու հա- մերաշխութեան կառավարութեան կը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱԻԱՊԵՏՅՈՒՆ

ԲԱՐԿԷՆ ՍԻՆԻՒԻ ՅԻՇԱՍԱԿԻՆ

Սիրքէճի բացերը , նաւերու , մա- կոյկներու , ցուկանաւերու խելք պատոցնող իրարանցումին մէջ Ասա- նան իր թուխ իրանը կը պառ- կեցուէր . մերթ շունչ մը շոգի պոթկալով կողէն , մերթ սրտածմլիկ թաւ կոծ մը արձակելով ձխնելոյցն ի վեր :

93ի աշնանամտի իրիկուն մըն էր կարծեմ : Մանօթներէս մէկուն ող- վերթ մաղթելու համար շոգեմաւ գա- ցած էի , ու վերջապէս էր երբոր Ա- ճանախ դուռնակին վրայ կեցած էի Աւագ դարթանին հետ՝ երթաւ բա- րով ըսելու . Ենվեհեր հայ նաւապետը , ծովու ճշմարիտ գայլ , արծաթ շա- ուայներով զրոսանդուած հորիզոնը կը զննէր իր թափանցանց մուկ թիբերովը : Մարդը , Սեւ ծովուն ե-

զերքները ծնած , երեսուն տարիէ ի վեր ալիքներու մոլեգնութեան զէմ կը ծեծկուէր պաղարեւունութեամբը ուղեւորի մը որ դաշտի մը արահե- տէն կը քայլէ : Ինծի համար անբա- ցատրելի հաճոյք էր հայ նաւապետի մը հետ խօսելը , բայց որչափ աւելի Սւազի զարթանի հետ , որուն ին- զախ ու անկեղծ նկարագրին առջեւ թուրքերն իսկ կը գողգողային սկուս կճրտացնելով :

Յանկարծ , Սւազ գալիթան իր զննական խոհանքը ընդհանու- ըով .

- Տեսա՞ր , ըսաւ , մեր նոր նա- լապետուն :
- Ոչ , պատասխանեցի . բայց կու- զեմ տեսնալ :
- Եւ անա նաւապետը իր բամբ ձայ- նովը վերէն որտոց :
- Պետրոս :
- Հայ է ուրեմն , հարցուցի :
- Հայ է , հայ . ախ աս նաւապե- տութիւնը ե՞րբ պիտի սիրեն հայե- րը :
- Պատուական մարդուն սեւեռուն գաղափարն էր թէ նաւապետութեան տարածումը մեր մէջ մեր փրկու-

թեան սատարներէն մէկը պիտի ըլ- լար :

Վայրկեան մը ետքը զէպի մեզ կը յառաջանար միջնահասակ երիտասարդ մը . կտակէ հաստ ու կոշտ պլուզա մը ինչպէս նաեւ լայն տափառ մը հագած , կլոր գիրուկ դէմքով , որուն վրայ անուխի պէս սեւ մանր աչուրներ արտակարգ ցրացում մը կը սփռէին : Ուժեղ ու կորովի էր , ու իր տեղայն գիւտագնութեան վրայ անխօսուկ տրամութիւն մը կերան- գուէր :

— Կը շնորհաւորեմ , բարեկամ , ըսի ինծի երկնցուցած լայն ու ար- զէն իսկ կողացած ձեռքը սեղմելով . աղէկ ասպարէզ ընտրե՞ր էք , յայտ- դու՞թիւն :

— Շնորհակալ եմ , ըսաւ հեզ ու ազնիւ շեշտով մը որ խորապէս յու- զեց զիս : Ես ձեզի Կեղոնախանէն կը ճանչնամ , աւելցուց . Չէ՞ք յիշե՞ր զիս : Պետրոս Բարեւան :

Թէեւ վեց եօթը տարի անցած էր , բայց իսկոյն յիշեցի այդ անունը ու անոր հետ նաեւ այդ դէմքը որ հի- մակ առնականացած էր , ու դպրոցի մանկային ճերմկուկ թարմութեան

տիւրը զեղնութիւն . մըն էր յայտը- դած :

Ու Բարեւան պատմեց թէ արդէն նաւային վարժարանը գացած էր եւ արհեստին տեսական մասը բաւական իւրացուցած . այժմ կըլլար գործնա- կանապէս տրվիլ զայն , Սւազի մէջ ճամբորդելով , Սւազ նաւապե- տին փորձ ու արդիւնաւոր ձեռքին տակ :

— Վեզ նայիմ , տղաս , կընէր գափտանը , Պետրոսին ուսը ծեծելով , աշխատէ որ քաջ նաւապետ մը ըլ- լաս :

Շոգեմալին կաթսան կը հեւար . վերջապէս կը տեղաւորէր : Գափտա- նին հետ պազուուէլէ ու Բարեւանին ձեռքը անգամ մըն ալ սեղմելէ յե- տոյ աճապարանքով դուրս նետուե- ցայ շոգեմալէն . ու քանի մը վայր- կեան ետքը Ասանան փրփուրի բամբակ դէզեր յորինելով ծովը կա- կուէր ուժեղ թափով մը :

Գանի մը ամիս ետքը Ասանան Պորոյ նաւահանգիստը դարձաւ : Բա

բարեկերպ : կառավարութիւնը իր-
րեւ փոխադարձ-սպասելովութիւն մը
իր բոլոր քաղաքացիներուն համար .
սպասելի սրբութիւն հեռանկար մը կը
բանայ այս նոր սկզբունքը : Բայց
մեծ գաղափարները նոյնչափ ալ մեծ
միջոցներ կը պահանջեն . սակայն
մեծ ոչ միայն նիւթական այլ եւ
մատերական անսակաւով : Լայն ըն-
կերական քաղաքականութիւն մը
պէտք է Գերմանիայի , որ ստալին
կարգի արուեստագիտական երկիր մը
ըլլալ ու համաշխարհային քաղաքա-
կանութիւն մը վարել կուզէ : Այ-
չափ լծու լինակի մէջ ըլլալ Գերմա-
նիայի ամբողջ աշխարհ-ժողովուրդը .
սրբաբար կը թաւաճուի ու լուսաւորուած
ըլլալ ու որչափ ազատ կարողանայ
չարթիլ ան , այնչափ մեծ ու ժողկեր-
նայ Գերմանիան համաշխարհային
վաճառակաւութեան ու քաղաքակա-
նութեան մէջ մտնուի : Անկարելի է
երեւակայիլ որ մարդ գուրքը հա-
մաշխարհային քաղաքականութիւն
մը ունենայ . ու ներքը դասակարգի-
րու անտեսական միակողմանի գրու-
թիւն մը , ստիկանական խնամա-
կարութիւն , պիտոյրակարգիչ ճնշում
ու նեղ գաղտնիականութիւն պահ-
պանէ : Առանց այս սովորող աշխա-
տող ժողովուրդին համաշխարհային
քաղաքականութիւն կարելի չէ . եթէ
կուզուի որ ան մեծ քաղաքական
կեանքի մը մէջ մտնայ , պէտք է ա-
նոր հետ պատկանաքով վարուել .
պէտք է անոր սալ լայն կրթութեան
ու մատուցող վարչակարգի կարելիու-
թիւնը , պէտք է բարձրացնել անոր
կենցաղը ու անոր սալ ազատ շար-
ժումը հասարակական կեանքի ամէն
ճիւղերու մէջ : Այսպէս կարելի է
ստեղծել մեծ Գերմանիան , որ մեր
պետական մարդերու հեռանկարին
մէջ կը պատկերանայ :

Տանընդունկերորդ դարը շատ մը
խնդիրներ լուծած է , բայց անոնցմէ
աւելին չի լուծուած կը յանձնէ քա-
ներորդ դարուն , որ անշուշտ չի պի-
տի-կրնայ ամբողջ ալ լուծել : Ու-
րիշ կերպ չի կրնար բխալ . որովհե-
տեւ մարդկայինութիւնը կուզէ դեռ եր-
կար ապրիլ ու ապագայ դարերուն ալ
գործ պէտք է : Բայց եթէ մարդկու-
թիւնը մեծ խնդիրներով կը թեւա-
կուի նոր դարը , միւս կողմէ ալ այդ
խնդիրներու լուծումին հաջոր աւելի

րեկամներս տեսնալու կրթալով , նո-
րին Բարեանին հանդիպեցայ . կար-
միր ծովին արեւը էրեր մըկեր էր իր
լայն ու տափակ երեսը , որուն վրայ
սակայն մտածկոտ տիրութիւնը կար
ու կը մնար միշտ :

Աւագ զափտանին հարցուցի թէ
գո՞հ էր նապակեցողէն :
— Ըսանք , ըսաւ , « թոհաֆ » տղայ
մըն է . վախ ըսուած քանը չունի ,
ճարպիկ ալ է , բայց տէ՛րտ մը ունի
ինչ ունի չհասկցայ խելքը գլուխը
չէ . նայինք մէջմըն ալ ծովերը չա-
փենք ընտր կըլլայ :

Երբոր Ասանն յաջորդ ուղեու-
րութեան համար ճամբայ պիտի ել-
լար , Պետրոս Բարեան չերեւցաւ .
փնտոցեցին զինքը եւ չգտան :

— Մե՛ղք , ըսաւ . Լւագ գափտան ,
աղէկ նաւապետ կըլլար :

Ալ անկէց ետքը ոչ ինք երեւցաւ .
ոչ փր-խօսքը եղաւ . Օր-վը ասկայն
զերպաւոր դէմն հանեց զինքը փողո-
ցին մէջ : Նաւապետութիւնուէ պլու-
զան , հիմակ յաջորդած էին քաղ-

շատ ու ժեր կը բերէ իրեն հետ քան
ինչ որ ունէր անցեալ դարերու մէջ :
Գիտակցութիւնը այնպիսի աւաի-
ճանի մը հասած է ու բնական ու-
ժերու շահագործումը այն աստիճան
զարգացած է , ինչպէս երբէք անցեալին
մէջ : Մենք զէպի մարդկութեան նպա-
տակը նշանակելի քայլիս ստած ենք :
Այս նպատակը կը կոչուի բնութեան
տիրապետում . ու արդարութեան տի-
րապետութեան հաստատում : Անցեալի
յաջողութիւնը գրաւական մըն է ա-
պագայի յաջողութեան : Ու այնպէս
ոտք կը դնենք քաներորդ դարու
չէմին վրայ , ու բախ մեծ նւաճում
ներուն վրայ բայց նաեւ հաստատ ու-
րոշած : միշտ աշխատել ճշմարտու-
թեան , ազատութեան ու արդարու-
թեան ոգիով Գերման ժողովուրդին
ու ամբողջ մարդկութեան բարօրու-
թեանը :

Թարգմ. Ա.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՍԼԻՄԻԱ , 15 Դեկտ.

Ժամանակէ մը ի վեր հայ լը-
րագրութեանց մէջ երեւցած
թեր ու դէմ թղթակցութիւննե-
րը , անձնական Նոյվ խմբագ-
րուած յօդուածները առիթ կու-
տան մեզ գրելու . մենք հեռու
կուսակցական մը ըլլալէ այս ինչ
թերթը գովելու կամ այն ինչ
թերթը պախարակելու յաւակ-
նութիւնը չունինք . ամէնքն ալ
կը սիրենք , կը սիրենք նաեւ
բոլոր այն քննադատական յօ-
դուածները որոնք հեռու ետա-
կանութենէ կը ծառայեն հան-
րութեան օգտին , կրկնուած սը-
խալի մը ուղղութեան և կամ որ
և է խնդրոյ մը լուսաբանու-
թեան :

Լրագրութիւնը նպատակ մը
ունի , նպատակ մը ազնիւ և վեհ .
կատարելիք գեր մը ունի , գեր
մը որ ամեն բանէ վեր է : Ինչ-
պէս որ վարժարանը հիմնուած է
մանուկին միտքը զարգացնելու ,
սիրտը ազնուացնելու , ու զպա-
-

փարական մարդ պատրաստելու ,
այնպէս ալ լրագրութիւնը հիմ-
նուած է ժողովրդի յառաջգի-
մութեանը նպատակու , նորա
բարոյական մակարդակը բարձ-
րացնելու . տարակոյս չունինք
որ մեր խմբագիրներու իտէալը
այդ է , և անշուշտ ատոր համար
ալ ընդգրկած են լրագրական
ասպարէզը . և սակայն ինչպէս
կը տեսնենք մեր արտասահմանի
հայ լրագրութիւնը հակառակ իր
նպատակին ազնուութեան , հա-
կառակ իր կատարելիք գերին
վեհութեան կը զրաղի , միանգա-
մայն կը զարգենէ իր քննարկող-
ները անհասական եսերով ու
անձնական հաշիւներով :

Արդարեւ բռնապետական եր-
կիրներու մէջ գրելու օրէնքը
խիտա է . հոն փոխանակ լոյսի
խաւարը կը տիրէ . քմահաճոյքը
և նորա ենթականերն են զեկա-
վարողները . ազատ գաղափար-
ներ , լայն մտքեր կաշկանդուած
են հոն . գրագէտին ու բանաս-
տեղծին գրիչը սոսկ բռնապետին
ու անոր արբանեակներուն փա-
ռարանութեան համար կը շար-
ժին . մէկ խօսքով ազատ ստեղ-
ծուած մարդոյն ազատ գաղա-
փարներն եւս կապտուած են , և
ս՞վ կրնայ հակառակիլ բռնապե-
տի հրամանին աքսոր և բանտ
պատրաստ են , իսկ ընդհակա-
ռակը քաղաքակրթեալ ու լու-
սասիրեալ երկիրներու մէջ ազատ
է գրելու օրէնքը , և մարդոց
թող կուտայ գրել ինչ որ յօգուտ
հանրութեան և երկրին է :

Լրագրութիւնը քաղաքակրթ-
ութեալ ու լուսաւորեալ երկիրնե-
րու մէջ ազատ է ունի կաշկան-
դումէ , նա գաղափարի մարմնա-
ցումն է , ճշուած ու հարտա-
հարուած ժողովրդի թարգմանը ,
անոր ներկայացուցիչը , անոր
հայելին , ուստի անոր մէջ պէտք
է երեւան զան այնպիսի գրու-

թիւներ որոնց մէջ փայլին բա-
րին , ճշմարտը ու զեղեցիկը .
լրագրութենէ դուրս պէտք է
արտաքսուին անհատական շահը
ու անձնական ետք , անոր համար
ան հանրութեան կրթիչն է , ա-
նոր զեկը , անոր կառավարիչը ,
ուրեմն պէտք է ըլլայ նա անա-
շատ և անփութիս իր ուղղութեան
մէջ :

Հայ ժողովրդեան վէրքերը
խորունկ են և վասնզատու .
սպեղանիի համար պէտք ունի
մաքուր և ազնիւ խմբագրական
ներու . օգտակար գրիչներու ,
վասնփոխութեան տեսչի անձ-
նական գծուց հաշիւներով գրուած
թղթակցութիւնները չեն կրնար
զանի միտքերը , չեն կրնար
սնոր պէտքերուն զոհացում
տալ : Փոխանակ ըսի ըսաներով
զբողբու լաւ չէ՞ որ զբողբուք
սովատանջ Հայաստանով , մեր
հաղաբար որբերով , պանդուխ-
տին կեանքով , և մանաւանդ
միանգամ ընդ միշտ վերջ տալու
համար այս անմէնուն որբազան
յեղափոխութեամբ . մենք հաս-
տատապէս համոզուած ենք որ
բացի յեղափոխութենէ միւս բո-
լոր ձեռուած խնդիրները երկ-
րորդական են . մեր գոյութիւնը
պահպանելու , բաղձացեալ ազա-
տութիւնը ձեռք բերելու համար
միայն և միայն հարկաւոր է յե-
ղափոխութիւնը . և մենք ոչ
խօսքով այլ գործքով կուր մղե-
լու ենք . անվերջ կուր մը
թշնամոյն գէ՛մ , անցեալէն փոր-
ձուելով հանդերձ ըսի ըսանե-
րով մամուլաճառ չըլլանք .
վասնզը կսպաննայ և մենք ա-
մէն մամանակէ աւելի պէտք ու-
նինք մեր նիւթական ու բարո-
յական ուժերու հաւաքման , հայ
ժողովուրդը ալ զլուծուած է այդ-
պիսի խնդիրներէ . չուզեր զբա-
ղիլ անոնցմով , նա լոյս կը
փնտէ , փոխանակ խափուսիկին
իրականը կորոնէ :

Թին վրայ հակած կը գիտեմ կենդա-
նագիր մը , որուն տակ գրուած է
Բարեկէն Սիւնի և յետոյ Պետրոս
Բարեան :

Անհնարին է ինծի նկարագրել
ինչ որ զգացի այդ պահուն . ուրեմն
իմ երեւակայած հակայ հերոսու ուրիշ
մէկը չէր եթէ ոչ ան հեզ և հովակ
Բարեանը . եւ գործը զոր կը փնտը-
ռէր . . .

Ու անմիջապէս աչքիս առջեւ
պատկերացաւ այդ վեհ մտան , վեր-
ջալոյսի մէջային տարտամութեան
մէջ , Սիրքէճիլ բացերը , Ասանի
գունակին վրայ , կտաւէ պլուզա մը
հագած , երկչոտ , խեղճուկ , գլխիկոր ,
որ ձեռքն ինծի կերկնցունէր , մինչ
Աւագ զափտան անոր ուսը կը ձեռէր
ըսելով .

— Կեզ նայիմ , տղա՛ս , աշխատէ
որ քաջ նաւապետ մը ըլլաս :

Այս հակադրական վերջուշումը ար-
ցունք մը խլեց աչքես :

Մենք մեր այս երկաստիվ կոչում կընենք «Շարժում» խորհրդակցական շարժելի վարդօրին և նորա պնդի թղթակցներուն որպէս զի վերջ տան և չպատասխանեն այն կարգ մը գրութեանց որոնք յաճախ երեւան կուգան «Շարժում» հակառակ այլ և այլ լրագիրներու մէջ. այսուամենայնիւ չենք պահանջեր որ «Շարժում» հին փաստած զայս փարները ձաղկելու արդարութենէն չեղի:

ՎԱՀԷ

ՍՕՅԻԱԻ ՍՈՒԼԹԱՆԻ ԱՐԺԱ

ՆԱԻՈՐ ՆԵՐԿԱՅՈՒՅԻՑԻՉԸ

Մտերս մակեղոնական «Ռէֆորմ» լրագրի տուած տեղեկութիւններու հիման վրայ, Սօֆիայի թիւրք հիւպատոսը՝ Նէճրիպ Մէլհամէ, սիրիացի կաթօլիկ արաբ մը իր գիւնանագէտի գիրքը ազարտող ստոր ոճրագործութիւնով կամբաստանուի:

Այս թուուղի նախկին թիւապարտը՝ որ խարդախութեան ու գողութեան համար դատապարտուեր է, իր արժանաւոր արհեստի շարագործական հակումներովը ընդունելութիւն կը գտնայ Երւսղը, ուր իր եզական ձիրքերուն համար աւելի գնահատուելով Փարիզի թիւրք գեղարտեստան խորհրդատու անդամ կը նշանակուի:

Ճրանսական կառավարութիւնը իր ոտանը հիւրնկալած գեւապանական բարձր միջավայրի մէջ, այս վաղեմի դատապարտեալին ներկայութիւնը լրբութիւն նկատելով՝ անյապաղ անոր հեռացումը պահանջեց: Սուլթանը իր սիրական լրբեմին յետ կանչեց և Պուլկարիոյ բնահանուր գիւնանադիտական գործակատար նշանակեց, մակեղոնական գործերուն աւելի մօտէն հսկելու ուր իր տրամադրութեան տակ էր լրտեսական խումբ մը հիւպատոսարանի յոյն բժիշկ Մօլոհատիսը և երկու հայեր (առոնց անունները ուրիշ առթիւ պիտի տանք) և շատ մը վարձկան անօթիներ: Փանք բուն եղելութեան:

Տրկին Մելհամէն իրեն սենեակի սպասուհի կը վարձէ 19 տարեկան զեղեցիկ խալուհի մը թերեզլինա Գասանօ անունով, անկեալ ազնուական ընտանիքէ: Օրիորդը իր հեղ ու պատուաւոր վարքովը շուտով բոլոր ընտանիքներէն կը յարգուի. Նէճրիպ Մելհամէ երբեմն օգտուելով տիկնոջ բացակայութենէն, փաղաքշական ու սիրային հանելուկներով օրիորդը զրօսցնելու յանդիմութիւն կուեննայ. մանկամարդ օրիորդը այդ լպիրջ ակնարկութիւններէն չփոթուելով խոյս կուտայ եղբի իր տիրոջ ձեռքէն Նէճրիպ Մելհամէ իրբեւ զիւր

նագէտ, շատով վերահաս կըլլայ այլկայ անյողոցդ բնատուրութեանը ու պինդ կամքին, սակայն կը վճռէ ոչ մի արգելի առջեւ չը խնարհիլ իր անասնական կիրքերուն յազուրդ սալու:

Կաթօլիկներու տօնի օր մը տիկնոջ եկեղեցի կերթայ, Նէճրիպ Մէլհամէ պատրուակ բռնելով իշխանին պաշտօնական ստութիւն տալը՝ չնկերանար իր տիկնոջը և օրիորդին ալ կարգիլէ իր թուալէթը շտկել:

Նախագէտ կարգադրութեան համաձայն հիւպատոսարանի բուրբ ծառաները ու պաշտօնեաները կը ցրուին և միայն կավազը կը մնայ:

Օրիորդը կը փակուի իր սենեակը՝ ծանր նախազգացումը մօտալուտ թշուառութեան կսկսի զինքը անհանգիստ ընել: Կավազը կը կանչէ զինքը տիրոջը սպասուորներու օրիորդը կը մերժէ, սակայն հրամաններու կրկնումը ու ծառաներու և ոչ մէկուն ներկայութիւնը կը պարտաւորեցնէ օրիորդին իր սիրոյ առանձնասենեակը երթալու: Գազանը արիւնխառան աչքերով օրիորդին վրան կը քալէ և դուռը կը կղպէ. ալլկան օգնութեան ծիշերը ապարդիւն կըմնան. բուն զիմողրում ու ճակատագրական կռիւ տեղի կուեննայ և խեղճը ուժաթափ կը լինի... մի կեղտոտա եղիւնագործութեան վերջ կուտայ այդ սոսկալի մաքառումին...:

Օրիորդը վշտահար ու ցաւերով տանջեալ անկողին կիչնայ. Մէլհամէ գործի ծանր հետեւութիւնը ըմբռնելով, օրիորդին ճամբայ կուտայ և բժիշկ ու լրտես Մօլոհատիսը հիւանդը գարմանելու կը սկսի. տեսակ տեսակ զեղբ տալով մինչեւ իսկ սպասուելով խեղճ ալլկան իր բժըշկական պատուէրները թէ ճշդութեամբ ի գործ չը գրուին. հաստատարի Մօլոհատիսը իր բոլոր հմտութիւնը կը փորձէ իր տիրոջ ոճիրը հաստատող միակ կենդանի վկան անհետացնել. սակայն ի դուր, օրիորդը յի կը մնայ և իր ապօրինի գոյութիւնը բողոքող երեխան աշխարհ կուգայ. վատարազգ ալլկը կը գիմէ իտալական հիւպատոսին և կաթօլիկ առաջնորդին, սակայն երկուքն ալ անձեռնահաս կը համարեն դատ վարել Կարմիր-Սուլթանի ներկայացուցիչի գէմ: Ան ատեն զոհը նորէն իր գահճին կը գիմէ նորածին երեխայի ապրուստը հոգալու. Մէլհամէ չի պատասխաներ. օր մը քայտուղարը կուգայ և օրիորդին 300 ֆրանք ճանապարհածախս կուտայ որ Պօլիս մեկնի և հոն իր ծախքով յանձնարարուած տեղ մը պատասպանուի ու խնամուի. օրիորդը նախագուշակելով նոր վտանգներ, չի համաձայնիր. օրիորդի դժբաղդու

թիւնը հետարբորդներ կուեննայ և արգարութեան գիմելու ձեռնամուխ կըլլան իրեն. գործը դատարանին յանձնուած է և մայրաքաղաքի հեղինակաւոր իրաւաբանները յանձն առեր են զատը վարել այդ ապիրատին գէմ բարեսիրաբար:

Մէլհամէ հիմակ Սօֆիա չէ, վաղուց է որ Պօլիս Երւսղը կը հիւրասիրուի Մատրիտի հիւպատոսութիւնը ձեռք բերելու համար:

Սօֆիա, 9 Յունի. 1900

Ա Ջ Դ

Ազգային երկուս վարժարանաց բացումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ երկուշաբթի, Յունիս 17, թաղապետութեան երկրորդ հրահանգին համաձայն: Ամէն անոնք որ վարժարանիս աշակերտ ու աշակերտուհի տալ կուզեն, թող փութան վաղուէ սկսեալ իրենց զուակաց անունները հոգաբարձութեան ընդունելութեան ամսարին մէջ արձանագրել տալու:

Ի գիմաց Հոգաբարձութեան Ատենադպիր Ատենայեան Գ. Կիւլպիսեան Յ. Մ. Թովմասեան Վառնա, 11 Յունի. 1900

ԱՐՏԱՔԻՆ (ԼՈՒՐԵՐ

Թուրքիոյ լրագիրները անորոշ կերպով կը հարգեան տաճկական զօրքերու ընդհարումը Սիրիոյ արաբներու հետ:

— Ըստ անգլիական բանակէն ստացուած տեղեկութիւններու, Օրանի Պօէրները խաղաղութիւն կուզեն:

— Լօնտօնէն «Պերիլները Թագապարթին կը հաղորդեն թէ պատերազմական նախարարութիւնը մասնաւոր հեռագիր մը ստացած է Լէտոմիտի պաշարման վերցուելու մասին:

— Զրոյց կը շրջի թէ Սերպիոյ մայրաքաղաքի Պելկրատի մէջ, քանի մը սերպ ուռնողները ցոյց բրած են Պուլկար հիւպատոսարանի առջեւ ու պատուած Պուլկարական դրօշակը. և վերջը Միլան, Պուլկարիոյ գոհացում տալու համար, զօրագունքի մը զլուխ անցած հիւպատոսարանի առջեւ բարեի կեցեր է:

— Անգլիոյ մէջ մեծ անձկութիւն կը տիրէ. մէկ քանի օր է որ ժէներալ Պիլլերէն լուրեր կսպասեն Պատերազմական նախարարութիւնն ամէն առաւօտ երեկոյ նոյն պատասխանը կուտայ— լուրեր չկան— և յի ինչ ամէնը զիտեն թէ նախարարութիւնը շատ հեռագիրներ ստացած է ժէներալ Պիլլերէն: Կը կարծուի թէ նախարարութիւնը զի մամբ չի հաղորդեր լուրերը, մինչեւ որ տեղի ունենան Պիլլերի ռազմական շարժումները:

— Պանք Օթօմանը համաձայնած է վճարել Ռուսիոյ պատերազմական պարարէն 350,000 ոսկի տարեկանը:

— Հնդկաստանի մէջ ապստամբական փոքրիկ շարժում մը տեղի ունեցեր է անգլիական կառավարութեան գէմ. խոտմարտներու պարագլուխը ձերբակալուած է:

— Պօլսէն Եգիպտոս հասած լուրերուն համաձայն, Ղաչի Մուխթար փաշան, օսմանեան գոմիսէրը իսկապէս Սուլթանի աչքէն ինկած է նամակի մը պատճառով որով Սուլթանը Սուլթանը շտապեցուցեր է իրազործել բարենորոգումները:

Մուխթար պիտի արձակուի եւ զեր իր պաշտօնէն և մինչև այժմ եթէ մնացած է, այդ ալ շնորհիւ խալիփի միջամտութեան:

ԽՄԻԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇՆՐԺՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեւումն, հասցէւումն, նամակազուխ, հարսանեկան հրաւիրազիւր, մահազդ, ինչպէս նաև պրօշլուները:

Գիները յոյժ գիւրամատչելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին:

ՅԱՆՁՆԵՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԵՆՏԻԿ ԸՆԴՍՐՁՈՒՆ ԵՐԿՐԱՐԱՆ ՀԱՅԿՍՏԱՆ ԿԱՐ ՀՍԻԱՍ ԱՆՈՅ

Հին և նոր Ազգ. երգերու գին 2 ֆր. սոյն երգարանը կը ծախուի Վառնա, Ա. Ջարպանէլիսանի գրատունը նաև կը գտնուի ամէն տեսակ գրոցական և վրպական գրքեր. դրամի փոխարէն կընդունի նաև նամակագրոյժ. Գնում եւ վաճառում ամէն տեսակ գործածուած նամակագրոյժներու:

ՊՕՐՍԱ

Վառնա 11 Յունիս

Վախօն	Լիպրա	Ցրանք
ՊՈՂՏԱՅ	53-57	9.50-10.60
ՄԻՍԻՐ	54-56	5.90-6.20
ԱՐՔԱ	—	—
ԵՈՒԼԱՅ	—	—
ՅԱՍՈՒԼԵԱ	—	—
ՏԱՐԸ	—	—
Առապա	Լիպրա	Ցրանք
ՊՈՂՏԱՅ	55-60	9.50-11.20
ԱՐՔԱ	38-44	6.50-7.40
ԵՈՒԼԱՅ	35-36	5.20-5.30
ՄԻՍԻՐ	55-57	6-7
ՏԱՐԸ	55-58	5.50-6.0
ՅԱՍՈՒԼԵԱ	100 զիւր	12-20

Հէր կիւն կելէն մալ	ՊՈՂՏԱՅ	ԱՐՔԱ	ԵՈՒԼԱՅ	ՅԱՍՈՒԼԵԱ	ՄԻՍԻՐ	ՏԱՐԸ
—	—	—	—	—	—	—
—	—	—	—	—	—	—
—	—	—	—	—	—	—
—	—	—	—	—	—	—
—	—	—	—	—	—	—

Առապա մուամէլէսի Դարօլէն 22.40 ֆրանք հիսապը իլէ տիր: